

25.219 №498

ԱՐԴՐԿՈՎԿԱՍԱՆ ԳՅՈՒՂ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿ

ԶՐՈՒՅՑ ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀԵՏ

Գյուղ-տնտեսական Վարկային ընկերության
մեջ մացրված խնայողությունների մասին—
(о вкладах)

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻНՍՏԻՎՈՒԴ
ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ
Ակադեմիա Խան
СССР

ԹԲ Բ Լ Բ Ս
1927

332.2

Զ. 99

1928 N 306
15 JAN 2010

С-0
Са2556

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԳՅՈՒՂ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿ

332.2

4-99

ԶՐՈՒՅՑ ԳՅՈՒՂԱՑՈՒ ՀԵՏ

Գյուղ-տնտեսական Վարկային ընկերության
մեջ մագրված խօսադրությունների մասին—

(օ վելաքաշ)

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Թ. Բ. Շ. Խ.
1927

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОСЕДЕННИЯ
Академии Наук
СССР

10/3 APR 2013

25.2/9

ՏԵՍԱԿԱՆ ՊՈԼԻԳՐԱՖԻԴՐՈՑԻ
ԱԿԱԿԻ ԾԵՐԵՑԵԼԻՒ ՓՈՂ. № 3.
ԳԼԱՎԱԼԻՏ 2050. ՏԻՐԱԺ 1000.



S9985-66

■ Ի՞նչ նպատակով գյուղ-տնտեսական վարկային լնկերությունները ընդունում են գումարներ (վկազներ), այսինքն հավաքում են գյուղացիների փոքր խնայողությունները և ժամանակավորապես ազատ գրամական գումարները:

Նրա համար, վորագիսդի ձեռքի տակ ունենան այնպիսի տրամադրելի միջոցներ, վորով հնարավոր լինի գրամական աշակցություն ցույց տալ այն բազմաթիվ գյուղատնտեսներին, վորոնք փողի կարիք են զգում, առանց վորի - ինչպես հայտնի յե, անհնար և վարել ու զարգացնել գյուղատնտեսությունը: Գյուղատնտեսությունը՝ զարգացնելուն ձգտում են ամենքը, վոչ միայն գյուղացիները անհատորեն, այլև պետությունը ամբողջապես: Բայցի գրանից, վարկային լնկերությունները հետապնդում են նաև այն նպատակը, վոր հնարագորություն տան գյուղացիներին ոգտավետ կերպով պահ տալ թե իրենց և թե ուրիշների համար իրենց գրամական խնայողությունները:

■ Յեթե Խորհրդային պետությունը ձգտում է գյուղատնտեսության զարգացման—միթե այդ

գեղքում վարկային ընկերությունները իրենց ան-
հրաժեշտ միջոցները չեն կարող պետությունից
ստանալ, չդիմելով մասնավոր դրամագլուխներին
(վելագներին)

Վոչ, այդ անհնար ե, վորովհետև Խորհրդային
պետությունը արդեն շատ մեծ դժվարությամբ
բաց ե թողել զյուղատնտեսական վարկային ըն-
կերություններին ավելի մեծ չափով գումարներ,
քան մինչ հեղափոխական իշխանությունը ոգնել
եր մանր վարկային ընկերություններին: Բայց
այդ միջոցները կարող են բավարարել զյուղացի-
ներին ոգնելու կարիքի գուցե միայն տասներորդ
մասին:

■ Յեթե պետություն համար դժվար ե տալ
բավարար չափով դրամական միջոցներ, հապա-
խչու պետք ե յենթագրել, վոր այդպիսի միջոց-
ներ կարող ե տալ զյուղացիությունը:

Վորովհետև հայտնի յե վորքան փող ե գնացել
պեսի զյուղ ե ինչքան այստեղից վերադարձել
քաղաք: Մնացած մնում ե զյուղում: Այդպիսի
գումարներ, մոտավոր հաշվով, զյուղում պետք
ե մնի մոտ մի քանի հարյուր միլիոն: Հետևագես,
շատ զյուղացիներ ունեն դրամական ինայոգու-

թյուն, կամ թե ժամանակավորապես ազատ մի-
ջոցներ:

■ Նաև գումարներ և առայժմ զյուղացիների
կողմից մտցրված զյուղ-տնտեսական վարկային
ընկերությունների մեջ:

Մոտավորապես 14 միլիոն, այն և 10 կ. յու-
րաքանչյուր սուրլուն, վոր սաացել են վարկային
ընկերությունները պետությունից Գյուղ-տնտե-
սական բանկի միջացով:

■ Նաև գումարներ եր մտցրված մինչ պա-
տերազմը վարկային և փոխառու ինայողական
ընկերություններում:

Մոտավորապես 500 միլիոն, այսինքն ընկե-
րության պետական ազբյուրներից ստացված յու-
րաքանչյուր սուրլուն — 5 ո:

■ Ի՞նչ պետք ե անել, վորպեսի ինայողու-
թյուններ հիմա յել մեծ չափով մտցնվեն ընկե-
րության մեջ:

Վոչ-վոքի չի կարելի ստիտել գումարներ մըտ-
ցնել ընկերության մեջ, այդ կախված ե յուրա-
քանչյուրի պատ կամքից: իսկ այդ կամքը առաջ
ե գալիս, յերբ ամեն վոք պարզորեն կհասկանա,
վոր ընկերության մեջ ինայողությունները մըտ-
ցնելը ինելացի յե, շահագետ ու անվտանգ ե մըտ-

ցնողի համար և ոգտավետ ուրիշների համար: Շատերը արդեն հասկացել են այդ, ուստի շատ տեղերում վերջին ժամանակներս ինսայոզությունները (վկլադները) մեծ չափով ե կատարվում:

■ Իսչու գրամական խնայոզությունները ընկերության մեջ մտցնելը համարվում է ավելի խելացի, քան թե այդ խնայոզությունները պահել տանը:

Փողը տան մեջ կարող է այրվել, նրան կարող են գողանալ մանավանդ շատ մեծ է լինում նրան իզուր տեղը ծախսելու հակումը: Տանը մընալով, թողը վոչ մի յեկամուռա չի բերում տիրոջը: Ընկերության մեջ այդպիսի վտանգներ չեն կարող լինել և մինչույն ժամանակ գրամատերը իր փողի համար ընկերությունից ստանցում է համապատասխան տոկոսներ: Նշանակում է — նա կրերէ նրան փորոշ յեկամուտ:

■ Յեթե փողը տանը պահելով յեկամուռ չի տալիս, հապա ի՞նչ պատճառով վարկային ընկերությունը նրա համար տոկոսներ և վճարում:

Վորովհետև ընկերությունը փողը չի պահում իրեն արկղներում, այլնա ոգտագործում է նրան, տալով փոխատվություն (ссуда) իր անդամներին, մեջ:

վորի համար պարտատերերից նա ստանում է վորոչ տոկոսներ:

■ Յեթե ընկերությունը ներմուծած փողը (вклады) բաժանում է իր անդամներին իրրե փոխատվություն (ссуда), հապա ի՞նչ միջոցներից ընկերությունը պիտի կարողանա վերադարձնել այդ ներմուծած գումարները իրենց տերերին, յեթե նրանք ամբողջովին, կամ մասամբ հետ պահանջեն իրենց փողը:

Ընկերության տրամադրության տակ, առհաս-սարակ, միշտ լինում է ազատ գումարներ: Այսոր յեթե նա փոխատվություն է տալիս մի քանիսին, վաղը ուրիշ պարտատերեր վերադարձնում են իրենց պարտքը: Փողը ջրի նման գալիս ու գնում է ընկերության մեջ: Բայց, հակառակ սպասածին, յեթե յեղած գումարը նույնիսկ շրավարաբ պահանջին, այդպիսի գեպքերում ընկերությանը ոգնում է գյուղ-տնտեսական բանկը, վոր այդպի-սի գեպքերում առանձին վարկ է տալիս ընկե-րության:

■ Բացի այն յեկամուտից, վոր փողատերը իրեր տոկոսներ ստանում է, ուրիշ ել ի՞նչ ոգուտ է նա ստանում, մտցնելով փողը ընկերության մեջ:

Մայնելով ընկերության մեջ նույնիսկ տմենափոքր խնայողությունները, վորոնք տանը պահելու գեղագում կարող են անփույժողեն ծախսվել, զյուղացին աննկատելի ու հեշտ կերպով կարող լինի հավաքել բավականին մեծ գումարներ, փորով հսարաւորություն կլինն տնտեսության մեջ մտցնելու վորոշ ոգտակար և անհրաժեշտ փափոխություն: Որինակ — աշնանից սկսած փոքր խնայողություններ մտցնելով ընկերության մեջ, գարնանը արդեն այդ տնտեսած գումարները կարելի կլինի մտցնել նույն այդ ընկերության մեջ իրրև կանխագձար, զյուղատնտեսական մեքենա գնելու համար, վորոշ և կտրվի նրան, պայմանով, վոր գնի մնացած մասը վճարվի մաս-մաս:

Բացի գրանից, ընկերությունը հեշտությամբ է հավատում զյուղացուն փոխատվություն տալ, չե իոր նա ել նրան և հավատացել իր գումարները: Զեռքը-ձեռքն է լվանում:

■ Կարելի յե ընկերության մեջ մացրված փողը ցանկացած ժամանակին հետ ստանալ:

Այդ կախված կլինի այն պայմաննորից, ինչ պայմաններով փողը մացրվում է ընկերության մեջ: Կարելի յե փողը մտցնել վորոշ ժամանակով: Այդպիսի գումարներին ընկերությունը ավելի

մեծ տոկոսներ է վճարում, վորովհետեւ յերկար ժամանակով կարող է ոգտվել փողից և նախորդք ել գիտե յերբ պետք է փողը վերադարձնե: Խնայողությունը կարելի յե մտցնել նաև այն պայմանով, վոր նրան հետ ստանալ առաջին իսկ պահանջով, կամ պահանջից մի քանի որ հետո:

■ Ո՞ւմ է վերադարձվում մտցրված խնայողությունը նրա աիրօջ մահվան դեպքում:

Նրա որինավոր ժառանգներին: Բայց խնայողության տերը կարող է կարգադրել, վոր այն տրվի և մի ուրիշին՝ որինակ՝ յեզրորը, քրոջը և այլն, վորոնց այլ գեղաքում, բացի խնայողած գումարներից ըստ մեր որենքների ստացվածք չի կարելի կտակել:

■ Բայց կարման է ընկերության մեջ մտցրված խնայողությունների հետ պատահել այն, ինչ վոր պատահեց նրանց հետ պատերազմից հետո, վորոնք մտցրված հյին նախկին մասը վարկային հիմնարկություններում — այսինքն նրանք չեն կարող կորչել:

Այն խնայողությունները չեյին վոր կորան, այլ թե դրամը կորցրեց իր գինը, այսինքն իր գնողական ույժը, միենույն և նրանք վարկային

ընկերության մեջ եյին գտնվում, թե տանը, այդ յերեսույթի հետ ընկերությունը և մտցրված խնայողությունները վոչ մի առնչություն չունեն:

■ Զի՞ կարող պատահել, վոր փողը նորից կորցնի իր արժեքը:

Վորպեսզի նման յերեսույթներ տեղի չունենան, հարկավոր և վոր փողը վոչ թե անշարժ ընկնի տանը արկղների մեջ, այլ գտնվի կենդանի շըրջանառության մեջ, հակառակ պարագայում պետառությունը ստիպված կլինի ավելորդ դրամ կըսրել, վորը և քցում է յեղած փողի արժեքը: Ուրեմն, փողի համար վտանգավորն այն ե, վոր նա առանց շրջանառության և մնում: Ով այդ չի հասկանում — նա, ինչպես առածն և ասում, «Խոտի վրա ։ նստած շան և նմանում, — վոչ ինքն և ոգտվում վոչ ուրիշը և խոտը փթում ե:

■ Յեթե ինայած փողը մտցնել ընկերության մեջ, տես վոր, քեզ կարող են բռունցք (կոլակ) ել անվանել:

Այդ չի կարող պատահել առաջինը այն պատճառով, վոր բռունցքը յերբեք փող չի մտցնում ընկերության մեջ, նա չի կարող հակառակ իր

շահերին ոգնած լինել ընկերությանը: Բացի զրանից — ինայողությունները (вклады) մնում են գաղտնի ամենից:

■ Ի՞նչումն ե ինայողության գաղտնիքը:

Նրանում, վոր վոչ վարչության անդամները, վոչ խորհրդի, վոչ վերաստուգիչ և վոչ ել ընկերության ծառայողները, նաև այն անձինք, վորոնք կատարում են ընկերության գործերի վերաստուգումը և քննությունը — իրավունք չունեն վոչ վորի և վոչ մի պարագայում տեղեկացնել փողատերի տղանունը, կամ թե տեղեկ ւթյուն տալ նրա ինայողության մասին: Ընկերությունը կարող ե այս, կամ այն տեղեկությունը տալ փողատերի, կամ այն տեղեկությունը կամ դատական և քննիչ մարմիններին որենքով ճիշտ սահմանված կարգով: Ուրիշ վոչ մի պետական հիմնարկություն, նույն իսկ հարկային տեսչությունը — իրավունք չունեն վորեկից տեղեկություն պահանջել փողատերի, կամ նրա ներմուծած գումարի մասին:

■ Պատժված են այն անձինք, վորոնք խաղաւում են ինայողությունների այդ գաղտնիքը:

Այդ ըանի համար նրանք պատասխանում են քրեական որենքով: 1927 թ. ոգոստոսի 31-ին դուրս յեկած նոր որենքով—դատախազալին մարմինները, պետք ե հետապնդեն, վոր ինայողությունների գաղտնիքը խաղթող անձնավորությունները յենթարկվեն քրեական պատասխանաւովության:

■ Բայց չի կարելի ինայողությունը այնպես մտցնել վոր նույն իսկ ընկերության վարչությունն ել չիմանա, թե ումն ե պատկանում գումարը:

Կարելի ե: Թույլատրվում ե ինայողությունները մտցնել վոչ միայն այս, կամ այն անձնավորության անունից, այլև՝ ըստ պահանջողի:

Այդպիսի ներմուծման գումարների տերը նայե, ում ձեռքումն ե լինում ընկերության կողմից տված համապատասխան փաստաթուղթը: Այդպիսի եեպքում չար կամքն ել չի կարող բաց անել ինայողության գաղտնիքը:

■ Կարող ե ընկերության մեջ մտցրված ինայողությունը (վելած) յենթարկվել բռնագրավման վահանգին:

Վոչ: Նա անձեռնմիելի յե: Նրա վրա կարող ե արգելք դրվի միմիայն դատարանի առանձն գորոշմամբ:

■ Զի՞ կարող խանգարում առաջ գալ ընկերության գործնեության մեջ և այդպիսի գետքում գողատերը չի կորցնի իր լինայած գումարները:

Գործերի այդպիսի խանգարում կարող ե պատահել ամեն մի հիմնարկության մեջ, հետևապես կարող ե պատահել և վարկային ընկերության մոջ: Բայց այլպես գետքերում ել փողատերերը դժվար թե տուժեն — ահա թե ինչու. ընկերությունը իր ամբողջ ունեցվածքով է պատասխանում մտցրված գումարների համար, իսկ յոթե նրա միջոցներն ել չըավարաբեն փողատերերի բոլոր պահանջներին, այդ գետքում, ընկերության լիկվիդացիա լինելու պարագայում, նրա անդամները լրացուցիչ կերպով ել են պատասխանատու նրա պարտքերի առաջ: Որենքով խնայողած գումարների տերերի պահանջը առնչություն ունի հանդեպ մյուս պահանջատերերի: Այդպիսի պայմաններում կարիք չկա յերկյուղ կրելու մտցրված գումարների վիճակի մասին, վորովհետև չի կարելի յենթարկել, վոր ընկերության վասար կարող ե ավելի լինել քան բամնեվճարների գումարը և այն ըուր գրամական ոգնությունը, վոր ստանում ե ընկերությունը գլուղ - տնտեսական բանկից իրեն

Նրան հիմնական կապիտալ և կամ շրջանառության միջոցներ:

■ Վարկային ընկերությունը գտնվում է վորեիցե հսկողության տակ:

Այս այդ հսկողությունը գտնվում է ֆինժողկոմի մարմինների ձեռքում: Ընկերության գործնեությունը ստուգվում է վոչ միայն նրա հաշիվներով, այլ և վերաստուգման ճանապարհով, վորտեղի յեւ ունենում առնվազն տարեկան մէջ անգամ, յերբեմն ավելի հաճախ: Գյուղ-անտեսական վարկային միությունը, գյուղ-անտեսական բանկը և կոռուպերատիվ բանկը նույնպես հետեւում են նրա գործունեության և ոգնում նրան վորոշ հրահանգներով, յեթե ընկերությունը ոգտվում է այդ հիմնարկությունների վարկից:

■ Ընկերության մեջ ինայողություն մտցնողը (եկլածակ) չի կարող ինքն ել հետեւ նրա գործնեության, ունենալով նրա վրա վորոշ ազգեցություն:

Կարող ե, յեթե անդամագրվի հիմնարկության: Այդ գեպքում նա մասնակցում է ընկերության ընդհանուր ժողովներին, վորը նրա վերագույն մարմինն է, ընտրում է պաշտոնյաններին ու տալիս նրանց վորոշ ցուցմունքներ:

■ Յեթե ընկերությար մեջ սկսե հոսել մեծ չափով խնայողություններ—այդ գեպքում ել բանկերը կշարունակեն տալ նրան դրամական աշակեցություն:

Իհարկե, և ավելի շուտ աջակցություն այն ընկերություններին, զորոնք ավելի մեծ չափով հավաքած ունեն գյուղացինների խնայողություններ:





ՀՀ Ազգային գրադարան



NL0209138

дог

С 255

ИМ
ЗУТ

ГРНЦ АН СССР
Института
Биотехнологии
Академии Наук
СССР